ԽՂՃԻ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐ

Այս օրերին մեր հայացքը գամված է կապույտ էկրաններին։ Ցասնամյակների ոչ մի համաժողով այնպես չի փոթորկել մեր հոգիները, ինչպես ժողովրդական դեպուտատների այս համագումարը։ Մոսկվայից հնչում է ճշմարտությունը։ Եվ ամեն մեկս ապրում է այդ ճշմարտությամբ։ Այո, հիրավի պատմական այս համագումարն ազդարարում է կեղծիքի, բռնության, ստրկամտության ժամանակների ավարտը, այս պատմական համագումարը խոստանում է վերականգնել մեր երկրի խաթարված պատիվը, կասեցնել մեր խղճի ու բարոյականության փլուզումը։ Եթե տասնամյակներ շարունակ մենք կարոտախտով էինք նայում Արևմուտքի պարլամենտների դեմոկրատիային, ապա այսօր Արևմուտքը պետք է նախանձով նայի մեր խորհրդային դեմոկրատիային, մեր պատգամավորների ազնիվ ու խիզախ ելույթներին։

Այդ խիզախների դասակում իր խորությամբ ու նպատակայնությամբ առանձնանում է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանի վառ ու տպավորիչ ելույթը, որը ոչ թե խոսք էր, այլ ցավի ու տառապանքի պոռթկում։ Առաջին անգամ այդքան ներկայացուցչական, հեղինակավոր ու հույժ պաշտոնական համաժողովում լիարժեք ներկայացվեց մեր լլկված, անիրավված ու տրոհված ժողովրդի դատը։ Մեր պատգամավորը համագումարի, միութենական բարձրագույն մարմինների առջև խնդիր դրեց հանրապետությունը դուրս բերել ներկա ճգնաժամային վիճակից։ Իսկ դա կարելի է և հնարավոր է անել ոչ թե բարձրագոչ խոսքերով, այլ ազնիվ ու սրտացավ վերաբերմունքով։ Բայց ինչ ազնվության մասին կարող է խոսք լինել, երբ ինֆորմացիայի կենտրոնական միջոցները (չնչին բացառությամբ) մի ամբողջ տարի կոլեկտիվ ջանքերով աղավաղում էին իրականությունը, ապակողմնորոշում հասարակական կարծիքը, կեղծիքը ներկայացնում որպես ճշմարտություն, նողկալի պիտակներ էին կպցնում տառապող ու պայքարող մի ամբողջ ժողովրդի։ Կենտրոնական թերթերի մի շարք լրագրողներ, առանց խորշելու, գործարքի մեջ էին մտնում իրենց խղճի հետ, արատավորում մեր մասնագիտության բարի անունը։

Այո, այսօրվա առաջնահերթ խնդիրն է՝ դարաբաղյան ալեբախություններից և երկրաշարժի ահավոր ողբերգությունից հետո հանրապետությունը հանել ճգնաժամային վիճակից։ Դա շատ դժվար, բայց և լուծելի խնդիր է։ Միայն թե առողջ և ազնիվ դիրքերից պետք է մոտենալ հանրապետության պրոբլեմներին, մի բան, որ, ավա՜ղ, դեռևս պակասում է։ Այնքան ասվում, խոսվում և կարծես թե արդեն ըմբռնումով է ընդունվում Ղարաբաղի ցավոտ հարցը, բայց... պրոբլեմի լուծումը տակավին դրված է սառույցի վրա։

Ամենուրեք վկայակոչվում է ադրբեջանական կողմի պահանջը։ Ղարաբաղյան պրոբլեմը դեռևս առատորեն մամուլում ներկայացվում է ադրբեջանական կարգախոսների տեսանկյունից, և ավելի շատ՝ տխրահռչակ Զ. Բունիաթովի։ Գիտական աշխարհի այս պատուհասը ոչ խիղճ ունի և ոչ էլ բարոյականություն։ Նրա թեզը ամեն ինչ ադրբեջանականացնելն է։ Եթե որևէ հնարքով մի փաստաթուղթ ստորագրվի, որ Մադագասկարը միացվում է Ադրբեջանին, ապա այս Բունիաթովը հաջորդ օրը «գիտական» հոդված կհրապարակի, որ այդ կղզին ստեղծվել օրից ադրբեջանական հող է, որ մադագասկարյան աբորիգենները լեզուն կորցրած ադերիներ են, իսկ տեղի նյութական կուլտուրան ստեղծվել է ազերիների ձեռքով։

Ահա այսպիսի «գիտնականին» տրվել է ակադեմիկոսի և այլ կոչումներ, որ հզոր տիտղոսներով պաշտպանված մի ամբողջ կյանք թունավորի հարևան ժողովրդի գոյությունը։

Ակամայից ուզում ես հարցնել, թե այ Բունիաթով և ուրիշներ, ինչո՞վ կվնասվեն Ադրբեջանում ապրող ազերի ժողովրդի շահերը, եթե Ղարաբաղի Ինքնավար Մարզի հայ ազգաբնակչությանը լիակատար ինքնավարություն և ինքնուրույնություն տրվի։ Բացեիբաց ասենք. այստեղ, որքան էլ դառն ու ցավալի է, հովանավորվում է ոչ թե Ադրբեջանի ազնիվ մարդասիրական պահանջը, այլ հարևան ժողովրդի ազգային արժանապատվությունը նսեմացնելու, նրան ստրկացնելու մոլի նկրտումը։ Այս մասին է խոսքը, այլ ոչ թե սահմանը վերանայելու կամ հողային պահանջների։ Հողը, որի մասին խոսվում է, միայն ու միայն Ղարաբաղի ժողովրդինն է։

Հայ ժողովուրդն արյուն է հեղել այս երկրի ազատության համար և ինքն էլ է իրավունք ձեռք բերել ազատ ու ապահով ապրելու։ Բայց նեռկա ճգնաժամային իրավիճակը հայ ժողովրդին հուզող հարցերի անտեսումը, 1915 թվականի հրեշավոր ցեղասպանության նկատմամբ մեր պետության հանցավոր-անտարբեր վերաբերմունքը, խորհրդային պետականության պայմաններում սումգայիթյան բարբարոսության իրողությունը, ազգաբնակչության հաճախակի թունավորումները, այս ամենը, ինչպես ընդգ. Սուրեն Հարությունյանն ասաց. «ծնում են սոցիալական և ազգային անպաշտպանվածության զգացում, հանրապետության ղեկավարության նկատմամբ վստահության ճգնաժամ»։

Խորհրդային հանրապետությունների և առաջին հերթին ռուս ժողովրդի խղճի ու պատվի գործն է օգնել կրտսեր եղբորը, մեղմել նրա ցավն ու տառապանքը և, եթե մեր ընդհանուր տանը վիճելի հարց է ծագել, արդար ու ազնիվ դատել։ Հենց այդպիսի ճշմարիտ կոչ է մեր հանրապետության ղեկավարի ելույթը։

Պատվական ԾԱՌԱՐՅԱՆ